նակ առնեն կաթոլիկ քահանաները։ Բոնիֆացիոսի նման պէտք է դիմադրել եկեղեցու և դպրոցի իրարից անջատման փորձերին։ Եպիսկոպոսները հրաւիրում են արքութեամբ պահպանել գերմանական եկեղեցու և ս. Աթոռի կապը՝ որպէս գերմանական ժողովրդին պարգեւած մեծ բարիք։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Գաուկի Real—Encyclopedie գրքի XVI հատորում Կատոլիքուշը բողոքականութեան մասին տալիս է հետաքրքիր նկարագիր աշխարհի զանազան մասերում։

Բողոքականութիւնը ամենից շատ հետևողներ ունի Ամերիկայի Միացեալ Նահանգներում, որտեղ 76 միլիոն ազգաբնակութիւնից 65—66 միլիոնը բողոքականութիւն է դաւանում։ Այնուհետև գալիս է Մեծ Բրիտանիան 37 միլիոն բողոքականներով Գերմանիան 35 միլիոն, որոնք բաժան եկեղեցիների. ապա Շվեդիան և Նորվեգիան, որտեղ կան $7^1/_2$ միլիոն բողոքականներ, Դանիան $2^1/_2$ միլիոն, Ռուսաստանը—6 միլիոն, Ունգարիան 4 միլիոն, Հոլանդիան 3 միլիոն, Զուիցերիան—2 միլիոն Ֆրանսիան $^1/_2$ միլիոն, Աւստրիան $^3/_4$ միլիոն։ Արտաքոյ Եւրոպայի՝ Անգլիական գաղութներում, մանաւանդ Կանադայում, Աւստրալիայում, Հնդկաստանում և հարաւային Աֆրիկայում՝— 10 միլիոն. եկեղեցիների թիւը՝— մօտ 4 միլիոն։ Բողոքականների թիւն այդպիսով ամբողջ երկրագնդի վրայ հասնում է 180 միլիոնի։ Ներքին բաժանմամբ այդ թուից 56 միլիոնը լուտերական են, 29 միլիոն անգլիական եկեղեցու հետևողներ. կալվինականութեան հետ կապուած եկեղեցիներին հետևողներ Եւրոպայում 32—33 միլիոն, Ամերիկայում մօտ 57 միլիոն, այլ տեղերում 10 միլիոն. ընդամենը մօտաւորապէս 100 միլիոն։ Վերջին տեղեկութիւնների համեմատ կաթոլիկների թիւն է 250—260 միլիոն, իսկ Արևելեան եկեղեցուն հետևողների թիւն է 100—110 միլիոն։

Նշանաւոր գիտնական և եկեղեցական պատմաբան Հարնակը նշանակուած է գլխաւոր վերատեսուչ Բերլինի կայսերական մատենադարանի պաշտօնից հրաժարուող Վելմանի փոխարէն։ Համալսարանում իւր ուսուցչապետական ամբիոնը նա վերապահում է իրեն, բայց նրա նոր պաշտօնի պատճառով իրեն կամքի համաձայն կընշանակուի օգնական, ինչպէս ասում են, հէնց իւր աշակերտներից։